

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման Ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Ակադեմիա) լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների իրականացման, կազմակերպման, անցկացման և ամփոփման հետ կապված հարաբերությունները:

2. Լրացուցիչ կրթական ծրագրերի և խորհրդատվական ծառայությունների շահառուներ են Ակադեմիայի սովորողները, աշխատողները, արտաքին շահակից կողմերը:

3. Տրամադրվող լրացուցիչ կրթական ծրագրերի և խորհրդատվական ծառայությունների (այսուհետ՝ լրացուցիչ ծառայություններ) վերջնարդյունքը շահառուների կարիքների բավարարումն է:

4. Լրացուցիչ ծառայությունների իրականացման համար հիմք են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության և կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի՝ կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Ակադեմիայի կանոնադրությունը, Ակադեմիայի ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

5. Սովորողների անհատական ուսումնական ծրագրերը կազմելու և ուսման ընթացքում նրանց աջակցելու նպատակով Ակադեմիան կարող է կազմակերպել ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում կընդգրկվեն մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

6. Լրացուցիչ ծառայությունների նպատակն է հասարակությանը մատուցել որակյալ լրացուցիչ ծառայություններ և խթանել մասնագիտական կարողությունների ստեղծման գործընթացը:

7. Լրացուցիչ ծառայությունների հիմնական խնդիրներ են՝

1) հասարակությանը ծառայություններ մատուցելու և մասնագիտական ուսցիալական ոլորտների վերաբերյալ իրազեկելու կարողությամբ անհատի ձևավորումը,

2) լրացուցիչ ծառայությունների մատուցումը՝ հաշվի առնելով հասարակության և Ակադեմիայում սովորողների կրթական կարիքները,

3) սովորողների շրջանում բարձր մակարդակի ժամանակակից կարողությունների ձևավորումը,

4) լրացուցիչ պարապմունքների կազմակերպման միջոցով սովորողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելը,

5) սովորողների շրջանում գիտական աշխատանք գրելու հմտություններ զարգացնելը,

6) սովորողների կարիերայի զարգացմանը նպաստելը,

7) աշխատաշուկայում սովորողների և շրջանավարտների մրցունակությանը նպաստելը,

8) սովորողների շարժունության և աշխատաշուկա մուտք գործելու համար պայմանների ստեղծումը:

8. Սույն կարգով սահմանված պահանջները պարտադիր են այն կառուցվածքային ստորաբաժանումների (Կարիերայի կենտրոն, լրացուցիչ և շարունական կրթության վարչություն և այլն) համար, որոնք առնչվում են լրացուցիչ ծառայությունների մատուցման գործին:

2. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ակադեմիայում տրամադրվում են հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝

- 1) լրացուցիչ կրթական ծառայություններ (այդ թվում՝ օտար լեզվի դասընթացներ),
- 2) կարիերայի զարգացմանն ուղղված խորհրդատվություն,
- 3) հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացներ:

10. Ակադեմիան պարտավոր է լրացուցիչ ծառայությունները պատշաճ ձևով տրամադրել շահառուներին:

11. Լրացուցիչ ծառայությունների կազմակերպման և իրականացման համար պատասխանատուների կողմից կազմվում է աշխատանքային պլան և/կամ համապատասխան ծրագիր, որի համաձայն՝ կազմակերպվում և իրականացվում են այդ ծառայությունները:

12. Լրացուցիչ ծառայություններն ուղղված են՝

1) հասարակության շրջանում ընդհանուր և մասնագիտական հմտությունների զարգացմանը,

2) մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելուն,

3) յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը և զարգացմանը,

4) անձի շահադրդման, ինտելեկտուալ, նպատակային մասնագիտական բնագավառների զարգացմանն ուղղված օգնության ցուցաբերմանը,

5) լեզվական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանն ու կատարելագործմանը,

6) կառավարչական հմտությունների զարգացմանը և կառավարման ոլորտի խորհրդատվական աջակցությանը,

7) աշխատանքի տեղավորման վերաբերյալ տեղեկատվական և խորհրդատվական աջակցությանը:

13. Յուրաքանչյուր լրացուցիչ ծառայության կազմակերպման ու իրականացման համար պատասխանատու է ծառայությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը:

14. Ակադեմիայում լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացումը պետք է երաշխավորի հասարակության և Ակադեմիայի ուսանողության կարիքներին համապատասխան մատուցվող ծառայությունների արդյունավետությունը:

15. Գործընթացների իրականացման համար լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կառուցվածքային ստորաբաժանումները և գործընթացների պատասխանատուներն առաջնորդվում են մշակված աշխատանքային պլաններով և/կամ համապատասխան ծրագրերով՝ հաշվի առնելով լրացուցիչ ծառայության ուղղվածությունը:

16. Ծառայությունների իրականացման վերահսկման համար պատասխանատու է Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնը:

3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

17. Լրացուցիչ կրթության մասնակիցներն են՝ Ակադեմիան, կրթական ծառայություններ իրականացնողները, լրացուցիչ կրթություն ստացողները:

18. Լրացուցիչ կրթությունն իրականացվում է երկկողմ համաձայնությամբ՝ Ակադեմիայի և սովորողի, կազմակերպության (այսուհետ՝ պատվիրատու) միջև երկու հավասարազոր օրինակից կնքվող պայմանագրի հիման վրա:

19. Վճարովի լրացուցիչ կրթական ծառայության իրականացումից հետո պատվիրատուին կարող է տրվել կատարողի կողմից հաստատված և կնքված փաստաթուղթ:

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

20. Ակադեմիան պարտավոր է լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝

1) Ակադեմիայի կողմից լրացուցիչ կրթական ծառայություն իրականացնելու հիմքերը.

- 2) լրացուցիչ կրթական ծրագրերը.
- 3) ժամերի քանակը.
- 4) ուսուցման տևողությունը.
- 5) դասավանդող մասնագետի որակավորումը.
- 6) իրականացվող լրացուցիչ ծրագրերի վճարի չափը (եթե ծառայությունը վճարովի է):

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

21. Լրացուցիչ կրթական ծառայություններն իրականացվում են ինչպես Ակադեմիայի, այնպես էլ հրավիրված մասնագետների միջոցով:

22. Լրացուցիչ կրթական ծառայություններ իրականացնող մասնագետի համապատասխան մասնագիտական որակավորումը պարտադիր է:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23. Ակադեմիան հասարակությանը և շահակից կողմերին պարտավոր է տրամադրել տեղեկատվություն իրականացվող լրացուցիչ ծառայությունների վերաբերյալ:

24. Տեղեկատվության տրամադրումն իրականացվում է ԶԼՄ-ների, Ակադեմիայի կայքի (www.paara.am) միջոցով և այլ միջոցներով:

25. Կայքում տեղադրվում են նյութեր լրացուցիչ ծառայությունների տրամադրման և կանոնակարգող փաստաթղթերի վերաբերյալ:

26. Տեղեկատվությունը շահակիցներին տրամադրվում է երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

7. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

27. Լրացուցիչ ծառայությունների կազմակերպման համար Ակադեմիան կատարում է թիրախային խմբերի ընտրություն և ձևավորում:

28. Խմբերը ձևավորվում են՝ կախված մատուցվող ծառայության տեսակից և այլ առանձնահատկություններից:

29. Ձևավորվելուց հետո խմբին են ներկայացվում ծառայության մատուցման մանրամասները:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ

30. Կախված լրացուցիչ ծառայության ձևից՝ կազմված աշխատանքային պլանի և/կամ համապատասխան ծրագրի համաձայն՝ կազմակերպվում են դասընթացներ կամ խորհրդատվություններ հստակ ուղղություններով:

31. Ծառայության իրականացման ժամանակ կիրառվում են դիդակտիկ նյութեր, տրամադրվում են ծառայության բուկլետները և այլ լրացուցիչ նյութեր:

32. Լրացուցիչ ծառայություններն մատուցելուց հետո անցկացվում է սպառողների/շահառուների բավարարվածության մակարդակի ուսումնասիրություն տարբեր մեթոդներով:

33. Բավարարվածության մակարդակի ուսումնասիրման ձևը որոշում է կոնկրետ ծառայություն մատուցող ստորաբաժանումը:

34. Տվյալ փուլում իրականացվում է շահառուների լրացուցիչ կրթական ծառայություններից բավարարվածության գնահատում, ինչը որոշում է՝

1) **ծառայության արդյունավետությունը**. արդյոք մատուցված ծառայությունը դրականորեն է ազդում շահառուների մասնագիտական կարողությունների վրա,

2) **շահառուների բավարարվածությունը**. արդյոք շահառուն բավարարված է ստացած ծառայությունից,

3) **ծառայության մատուցման համապատասխանությունը պլանավորված միջոցառումներին և ծառայության գործառույթներին:**

9. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

35. Լրացուցիչ ծառայությունների գործունեության գնահատման արդյունքների հիման վրա լրացուցիչ ծառայություն մատուցող յուրաքանչյուր ստորաբաժանում (Կարիերայի կենտրոն, լրացուցիչ կրթության վարչություն և այլն) կազմում է հաշվետվություն, որը ներկայացվում է քննարկման Ակադեմիայի գիտական խորհրդի նիստում: Կայացվում են որոշումներ լրացուցիչ ծառայությունների մատուցման բարելավման և ուղղիչ գործողությունների պլանների մշակման վերաբերյալ: Դրա նպատակը Ակադեմիայում լրացուցիչ կրթական ծառայությունների դերը կատարելագործելն ու զարգացնելն է: